ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-83

«29» 05 2019թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2019 թվականի մայիսի ամսվա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ
ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<< 21>> 05. 2019թ. N 7-Ա

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ ու 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286-Ն որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի համայնքապետարանում 2019 թվականի մայիսի 21-ին կայացած աճուրդային կարգով հողամասի վաճառքի արդյունքները,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի համայնքապետարանում 2019 թվականի մայիսի 21-ին կայացած, Արմավիրի մարզի Ոսկեհատի համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի վարելահողի 1,1568 հեկտար հողամասի (լոտ 1, կադաստրային ծածկագրով 04-081-0062-0002) աճուրդային կարգով հողամասի վաճառքի արդյունքները:

2. Աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված <<ՎԻՊԵԿՈ ԱՄ>> ԱՊԸ՝ ներկայացուցիչ Արա Ժիրայրի Հակոբյանի հետ, օրենքով սահմանված կարգով, կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

20 19թ. մայիսի 21
հ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2019 թ. թիվ 8-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2389-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ավագանու 14.08.2006թ. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձների համարակալման մասին» թիվ 2 որոշումը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում գտնվող քաղ. Լիլիյա Չիտչիյանին պատկանող 04-081-012-010 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասին տալ հասցե՝ 11-րդ փողոց թիվ 17:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2019 թվականի 27 մայիսի
գ. Ոսկեհատ